# ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ.
(Աշշուր և Խալդի աստվածների պաշտամունքից մինչև Քրիստոս)

Գրեկյան Ե. (ՀՄՊՀ, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Հայաստան)
ervandgr@yahoo.com

Բանալի բառեր՝ պաշտամունք, Աշշուր, Խալդի, Դիոնիսոս, Քրիստոս, միաստվածություն:

Մարդն իր սկզբնական պատկերացումներով, ըստ էության, եղել է միապաշտ: Այդ նախասկիզբ Էությունը, որը հանդես էր գալիս անիմիզմի կամ տոտեմիզմի ինչ-որ մի կերպարով, հանդիսանում էր մի շարք ասպեկտների կրող՝ նախապես մարմնավորելով պտղաբերության պաշտամունքն ու այստեղից բխող բուսականության, արևի, բնության տարերքի հատկանիշները, թերևս նաև՝ մեռնելու և վերածնվելու գաղափարը, իսկ պատմական որոշակի ժամանակաշրջանից հետո սովորաբար դառնում էր արդեն ռազմի(կ) աստված:

Ասորեստանյան պետության և ասորեստանցիների գլխավոր աստվածը, աստված-արքան, Աշշուրն էր: Աշշուրը լեռ էր, լեռ-աստված, նրա տունը (տաճարը) կոչվում էր «մեծ լեռ»: Իրեն ձոնված հիմներգերից մեկում նա բնորոշվում է որպես «լեռները բնորդող/լեռների պատճեն», աստվածների կերտող և Իշթարի արարիչ: Աշշուրը երկսեռ աստվածություն էր՝ Աշշուր-Իշթար անունով: Կարծում են, որ նա սկզբնապես եղել է իգական աստվածություն և անգամ նորասորեստանյան դարաշրջանում շարունակում էր ընկալվել որպես պտղաբերող ծառ: Աշշուրը չուներ կին, չուներ ընտանիք. Իշթար/Նինլիլի հետ նրա ամուսնական կապը ծագում էր հետագայում Աշշուրի՝ որպես «ասորեստանյան Էնլիլ» ընկալումից, իսկ Էնլիլի կինն էր Նինլիլը: Աշշուր աստծո պաշտամունքի մեջ տեսանելի են պտղաբերության ու մեռնող-հարություն առնող աստվածության գործառույթներ, նրա

պաշտամունքը միանշանակ կապվում էր բուսականության և մասնավորապես Կենաց ծառի հետ, Աշշուրը նաև Արև էր, միաժամանակ՝ ռազմի(կ) աստված և փաստորեն՝ կարող էր ինքնուրույն ներկայացնել ողջ դիցարանը: Աշշուրին դիմում էին որպես «իմ աստված», «տեր» և, ընդհանրապես, ilu(m)՝ «աստված» ասելով հասկանում էին պարզապես Աշշուրին: Նա չէր մարմնավորում բնության և աստվածային կոնկրետ ուժի, ինչպես մյուս աստվածությունները, նա կարծես ոչինչ չուներ և միաժամանակ ուներ ամեն ինչ: Աշշուրը միանշանակ առանձնանում էր իր կերպարով և Միջագետքում չուներ իր զուգահեռը:

Ուրարտական տերությունը, ի տարբերություն առաջավորասիական այլ երկրների, աչքի էր ընկնում գերագույն՝ Խալդի աստծու պաշտամունքի բացարձակացմամբ, պաշտամունք, որը Գրիգոր Ղափանցյանի կողմից բնորոշվեց որպես «խալդամոլություն»: Նա, ինչպես Աշշուրը, ըստ երևույթին սկզբնապես իգական աստվածություն էր, պտղաբերության ընդգծված հատկանիշներով: Խալդիի կին Վարուբանին կարող էր պարզապես լինել նրա իգական կողմի կրողը: Նա միաժամանակ արևային աստվածություն էր կամ պարզապես Արև, որի պաշտամունքում մեծ դեր ուներ նաև կրակը: Խալդին, ինչպես Աշշուրը և Դիոնիսոսը, կարծես թե մեռնող-հարություն առնող աստվածություն էր, թերևս նաև՝ Անդրաշխարհի տիրակալ և «Անդրաշխարհի Արև» (Արևը, սովորաբար, ուներ իր ընդգետնյա կրկնակը՝ անդրաշխարհի արևը), նրա պաշտամունքը կապվում էր ժայռերի հետ: Միևնույն ժամանակ Խալդին ռազմի(կ) աստվածություն էր: Խալդիի պաշտամունքի բացարձակացման վկայությունն էր այն, որ պաշտամունքային բոլոր արարողությունները կատարվել են Խալդիի «սուսի» տաճարում, «խալդյան դարպասների» կամ բաց-սրբավայր «խալդյան կոթողների» առջև: Ընդ որում, «տաճար» հասկացությունը կարող էր պատկերացվել որպես «Խալդիի տաճար»: Այսպիսով, ի դեմս Խալդիի

պաշտամունքի, Ուրարտուում գործ ունենք փաստացի միաստվածության հետ:

Խալդին հետագայում նույնացվեց Միհրի հետ, որը պահպանեց նրա մի շարք հատկանիշներ: Հնագույն միաստվածության այս նախատիպի գոյությունը, հավանաբար, էական եղավ Հայաստանի քրիստոնեական դարձի և նոր պաշտամունքի ձևավորման ժամանակ:

IN THE ROOTS OF MONOTHEISM

(From the Worship of the Gods Aššur and Haldi to Christ)

Grekyan Y. (Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Oriental Studies, Armenia)